ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/70

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ
Երրորդ անձ՝ «Նիտավտո» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Ռ. Մեհրաբյանի, Ա. Մանուկյանի
«Նիտավտո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ժ. Շիրվանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11» ծածկագրով բաց մրցույթ, ավտոբուսների պահեստամասերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 23.05.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել թիվ «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին չկայացած հայտարարել «57, 141, 147, 165, 191, 205, 212, 221, 222, 223, 260, 266, 267, 283, 294, 295, 297, 309, 310, 311, 312, 313» և նոր մրցույթ հայտարարել առանց ժամանակացույցի «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը» դաշտում արված նշումի և/կամ նշելով, որ նախատեսված պահեստամասերի համար ներկայացնել հավաստագիր որ մատակարարված ապրանքները համապատասխանում են HIGER KLQ 6770 մակնիշի ավտոբուսին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 23.05.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/70 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

02.06.2020թ.-ին և 12.06.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

02.06.2020թ.–ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Նիտավտո» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

Գործի քննությունն ավարտվել է 02.06.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.06.2020թ.-ին:

2. **<u>«Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ-ն 23.05.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար ավտոբուսների պահեստամասերի ձեռքբերման նպատակով ս.թ. մայիսի 11-ին կազմակերպել է ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11 ծածկագրով բաց մրցույթ: Ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունի նաև մեր կազմակերպությունը: Մրցույթի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻԲ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում (այսուհետ՝ Ժամանակացույց) «ապրանքի տեխնիկական բնութագիր» դաշտում հստակ չեն նկարագրված ապրանքի բնութագրերը, ինչպես պահանջվում է «գնումների մասին օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին

կետին, այն է՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները: Ժամանակացույցի «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը» դաշտում արված է նշում, որ «57, 141, 147, 165, 191, 205, 212, 221, 222, 223, 260, 266, 267, 283, 294, 295, 297, 309, 310, 311, 312, 313 չափաբաժիններով նախատեսված պահեստամասերի համար ներկայացնել հավաստագիր «HIGER BUS» ֆիրմայի կողմից, որ մատակարարված ապրանքները համապատասխանում են HIGER KLQ 6770 մակնիշի ավտոբուսներին», ինչը հակասում է Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետին, մասնավորապես՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների ամբողջական և համարժեք նկարագրությունը, այսինքն Պատվիրատուն դիտավորյալ սահմանել է ոչ հավասար պայմաններ: Միաժամանակ տեղին ենք համարում ավելացնել, որ Պատվիրատուն իր նախորդ տարվա նմանատիպ մրցույթում չի սահմանել նման կետ:

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով ասում է, որ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը: Տվյալ դեպքում մասնակիցը խախտել է Օրենքի վերոգրյալ կետը, քանի որ սահմանել է խտրական պահանջ:

Նկատի ունենալով որջ վերոգրյալը, կարծում ենք, որ ճիշտ կլիներ Պատվիրատուի կողմից սահմանել, որ տվյալ չափաբաժիններով նախատեսված պահեստամասերի համար ներկայացնել հավաստագիր որ մատակարարված ապրանքները համապատասխանում են HIGER KLQ 6770 մակնիշի ավտոբուսին:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է՝ պարտավորեցնել թիվ «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին չկայացած հայտարարել «57, 141, 147, 165, 191, 205, 212, 221, 222, 223, 260, 266, 267, 283, 294, 295, 297, 309, 310, 311, 312, 313» և նոր մրցույթ

հայտարարել առանց ժամանակացույցի «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը» դաշտում արված նշումի և/կամ նշելով, որ նախատեսված պահեստամասերի համար ներկայացնել հավաստագիր որ մատակարարված ապրանքները համապատասխանում են HIGER KLQ 6770 մակնիշի ավտոբուսին:

3. **«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.**

Բողոքներ քննող անձը 23.05.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/7689-2020 գրությամբ դիմել է «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ-ի կողմից 23.05.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 02.06.2020թ-ին հրավիրված նիստին:

Պատվիրատուն 02.06.2020թ.-ին թիվ ԵԱ 183-ել գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 23.05.2020 թվականի գրության հայտնում եմ, որ HIGER KLQ6770G մակնիշի ավտոբուսների համար նախատեսվող պահեստմասերը գնվում են ավտոբուսները սպասարկելու նպատակով: Նման դեպքում ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 23 կետի 4-րդ ենթակետի 15-րդ ենթամասը, թույլ է տալիս գնումը կազմակրպել մեկ անձից: Սակայն հաշվի առնելով, որ HIGER KLQ6770G մոդելի ավտոբուսներն այլևս չեն արտադրվում և «Հայգեր Բաս» ֆիրման համագործակցում է մեկ տասնյակից ավել պահեստամասեր արտադրող գործարանների հետ և իր կողմից արտադրվող ավտոբուսների պահեստամասերի համար այլ արտադրող գործարաններին ներկայացնում է տեխնիկական բնութագրեր և պահանջներ՝ հետևաբար ավտոբուսներն անվտանգ և անխափան շահագործելու համար նշված 22 անուն պահեստամասերի համար պահանջել ենք հավաստագիր «Հայգեր Բաս» ֆիրմայից, որ մատակարարված ապրանքները համապատասխանում են HIGER KLQ 6770 մակնիշի ավտոբուներին:

Հայտնում եմ, որ բողոքաբերի պահանջը անհիմն է, իսկ «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11» ծածկագրով բաց մրցույթի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի»

կազմման ժամանակ հիմք է ընդունվել ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 23 կետի 4-րդ ենթակետի 15-րդ ենթամասը»:

4. **<u>Երրորդ անձ՝ «Նիտավտո» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>**.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով գնանշման հարցման ընթքացակարգի շրջանակներում ընտրված/հաղթող մասնակից ճանաչված «Նիտավտո» ՍՊԸ-ն՝ 02.06.2020թ.–ին ներկայացրած միջնորդության հիման վրա ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձի ներկայացուցիչը, ներկայանալով 02.06.2020թ.-ին հրավիրված նիստին, բանավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ «RESUN» ընկերությունը, ում արտադրած ապրանքը գնվելու էր Երրորդ անձի կողմից, ունի «HIGER BUS» ֆիրմայի կողմից տրամադրված հասվաստագիր, և այն, որ ընկերության կողմից արտադրվող ապրանքները համապատասխանում են HIGER KLQ 6770 մակնիշի ավտոբուսին:

5. **<u>ԳԲՔԱ-LO-2020/70 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ավտոբուսների պահեստամասերի ձեռքբերման նպատակով 11.05.2020թ.-ին հայտարարվել է «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ), որը խմբավորված է 312 (երեք հարյուր տասներկու) չափաբաժիններում:

Մրցույթի հրավերի տեքստը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 11.05.2020թ. թիվ 1 որոշմամբ: Հայտերի բացման նիստի օր է սահմանվել 25.05.2020թ.-ին:

Հրավերով հաստատվել է թիվ 6 հավելվածը՝ ապրանքի մատակարարման պայմանագրի նախագիծը (այսուհետ նաև՝ պայմանագրի նախագիծ), այդ թվում նաև՝ պայմանագրի թիվ 1 հավելվածը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը:

Մրցույթի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 57, 141, 147, 165, 191,

205, 212, 221, 222, 223, 260, 266, 267, 283, 294, 295, 297, 309, 310, 311, 312, 313 չափաբաժինների մասով սահմանվել է, որ այդ չափաբաժիններով նախատեսված պահեստամասերի համար անհրաժեշտ է ներկայացնել «HIGER BUS» ֆիրմայի կողմից տրված հավաստագիր, որ մատակարարված ապրանքները համապատասխանում են HIGER KLQ 6770 մակնիշի ավտոբուսին:

6. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ-ի կողմից 23.05.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է

ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշ-տությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված

ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ ապրանքների գնման դեպքում հրավերով սահմանվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Պատվիրատուն հրավերով սահմանում է պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ

համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ավտոբուսների պահեստամասերի ձեռքբերման նպատակով 11.05.2020թ.-ին հայտարարված «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11» ծածկագրով բաց Մրցույթի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 57, 141, 147, 165, 191, 205, 212, 221, 222, 223, 260, 266, 267, 283, 294, 295, 297, 309, 310, 311, 312, 313 չափաբաժինների մասով սահմանվել է, որ այդ չափաբաժիններով նախատեսված պահեստամասերի համար անհրաժեշտ է ներկայացնել «HIGER BUS» ֆիրմայի կողմից տրված հավաստագիր, որ մատակարարված ապրանքները համապատասխանում են HIGER KLQ 6770 մակնիշի ավտոբուսին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն բողոքի քննության վեճի առարկա հանդիսացող չափաբաժինների մասով սահմանված «HIGER BUS» ֆիրմայի կողմից տրված հավաստագիր ներկայացնելու պահանջը հակասում է Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ և 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված պահանջներին, քանի որ մասնակիցը, հրավերով սահմանված դեպքում, հայտով՝ թիվ 1.1 հավելվածով ներկայացնում է միայն իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը, իսկ այլ փաստաթղթեր, մասնավորապես՝ ապրանքի արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակի ներկայացման պարտականություն Մասնակիցը հայտով՝ թիվ 1.1 հավելվածով չի կրում:

Սույն դեպքում Պատվիրատուն, հիմք ընդունելով Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ և 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված դրույթները, կարող է մասնակիցներից պահանջել ներկայացնել ոչ թե «HIGER BUS» ֆիրմայի կողմից տրված հավաստագիր, այլ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ, ինպես սահմանված է Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուն ավտոբուսների պահեստամասերի ձեռքբերման նպատակով 11.05.2020թ.-ին հայտարարված «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11» ծածկագրով բաց Մրցույթը կազմակերպելիս ոչ թե պետք է հիմք ընդուներ Կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի 15-րդ պարբերությունը

(ենթամասը), ինչպես Պատվիրատուն է նշել իր առարկություններում, այլ պետք է ղեկավարվեր Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ, ինչպես վերը նշվել է, քանի որ Կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի 15-րդ պարբերությունը վերաբերում է Օրենքի 23-րդ հոդվածով սահմանված մեկ անձից գնում կատարելու իրավակարգավորմանը, որը սույն դեպքում կիրառելի չէ, քանի որ Պատվիրատուն որպես գնման ընթացակարգի տեսակ ընտրել է բաց մրցույթը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր են, իսկ Մրցույթի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 57, 141, 147, 165, 191, 205, 212, 221, 222, 223, 260, 266, 267, 283, 294, 295, 297, 309, 310, 311 և 312 չափաբաժինների մասով սահմանված «HIGER BUS» ֆիրմայի կողմից տրված հավաստագրի ներկայացման պահանջը հակասում է Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ և 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված պահանջներին՝ որպիսի պայմաններում խախտվում են Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջները, ուստի ընթացակարգն վերը նշված չափաբաժինների մասով պետք է հայտարարել չկայացած:

Անդրադառնալով բողոքով ներկայացված «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին Մրցույթի հրավերի 313-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելուն պարտավորեցնելուն, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ավտոբուսների պահեստամասերի ձեռքբերման նպատակով 11.05.2020թ.-ին հայտարարված «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11» ծածկագրով բաց մրցույթը խմբավորված է 312 (երեք հարյուր տասներկու) չափաբաժիններում, որպիսի պայմաններում բողոքով ներկայացված 313-րդ չափաբաժնի մասով պահանջը դառնում է առարկայազուրկ, ուստի և մերժման ենթակա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ-ի կողմից 23.05.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/70 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը՝ 57, 141, 147, 165, 191, 205, 212, 221, 222, 223, 260, 266, 267, 283, 294, 295, 297, 309, 310, 311, 312 չափաբաժինների մասով:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**